ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ **ք. Եղեգնաձոր**

N 14... „18„ փետրվարի 2011 թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ.-ի հունվարի 30-ի <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին>> 134-Ն որոշման 1-ին կետի պահանջներով

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Սույն թվականի մարտի 29-ին Վայոց Ձորի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը հեղեղումների սպառնալիքի և առաջացման դեպքում>> թեմայով:
2. Կազմավորել ուսումնավարժության ղեկավարման կազմ՝ համաձայն հավելվածի:
3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝ Մարզպետարանը, մարզային փրկարարական վարչությունը, մարզի ծառայությունները, Եղեգնաձորի, Ագարակաձորի և Մալիշկայի համայնքները:
4. Մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Հակոբյանին՝ 5-օրյա ժամկետում մշակել ուսումնավարժության նախապատրաստման պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ